«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա *՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերը*

Հաստատություն *՝ք. Կապան, թիվ 12 ՆՈՒՀ*

Դաստիարակ՝ Լուսինե Բաղդասարյան

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...……2

Գլուխ1.Ընտանիքի դերն ուսումնադաստիարակչական աշխատանքներում……..……4-9

Գլուխ1.1.Ընտանիք ինստիտուտի դաստիարակչական սոցիալականացնող գործառույթները……...……4

Գլուխ1.2.Սաների ծնողների դերըմանկապարտեզում……7

Գլուխ2. Մանկավարժական աշխատողի համագործակցության և սաների ծնողների հետ համագործակցության ձևերը, կրթական աշխատանքների կազմակերպումը……..……...10

Եզրակացություն……16

Գրականություն ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր երկրում կրթության ոլորտում ընթանում են լայնածավալ բարեփոխումներ, որոնք պայմանավորված են հիմնականում համաշխարհային կրթական դաշտում ընթացող բարեփոխումներով, որոնց ազդեցությունը մենք կրում ենք, դրանք պայմանավորված են երկրի ներսում ընթացող զարգացումներով, և արդի ժամանակահատվածում կրթության դերի ու նշանակության առավել կարևորմամբ: Բարեփոխումները չեն շրջանցում հանրակրթության ոլորտը , որտեղ փոփոխությունները բազմաբնույթ են, և որտեղ շեշտադրված և ընդգծված են սանի, նրա կրթական կարիքների հաշվառումը կրթական բոլոր գործընթացներում: Այժմ առավելապես կարևորվում է երեխայակենտրոն ուսուցումը, քանի որ մանկապարտեզը երեխայի կյանքի առաջին սոցիալական ինստիտուտն է, որտեղ առավել մեծ նշանակություն են ստանում տարբեր համագործակցությունները ծնողների հետ և այն մոտեցման ցուցաբերումը, որ ուսուցման գործընթացի կենտրոնում երեխան է: Ինչպես երեխաները, այնպես էլ ծնողները բախվում են մանկապարտեզում առկա հիմնախնդիրներին, որոնք բազմաբնույթ են (սոցիալական, մանկավարժական, հոգեբանական), դրանք իհարկե հետագայում անընդհատ փոխակերպվում են, սակայն հիմնախնդիրների ինչպիսի դրսևորումներ էլ, որ լինեն դրանց ուղղված հետազոտությունները արդիական են և նպաստում են կրթական գործընթացի զարգացմանը: Երեխայակենտրոն ուսուցումն այսօր ուղղակիորեն առնչվում է առաջադրված մեթոդների վերանայման, դրանց կիրառման անհրաժեշտության, հնարավորությունների հետ: Բնականաբար ուսուցման, դաստիարակության գործընթացում առկա շատ խնդիրներ, հիմնահարցեր կապված են ծնողների, նրանց ծնողավարության կարողությունների հետ: Ուստի, պակաս կարևոր չէ ծնողների հետ աշխաանքի ձևերի ու ուղիների բացահայտման խնդիրը, քանի որ ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև ուսուցման գործընթացում ծնողների մասնակցության ապահովմամբ, նրանց իրազեկվածությամբ, օգնությամբ, այդ գործընթացի նկատմամբ ունեցած պատասխանատվությամբ: Մանկավարժական աշխատողները և սաների ծնողները պետք է միասին ընդգրկված լինեն ամենատարբեր գործընթացներում և ունենան մեկ ընդհանուր աշխատանքի մեջ ներգրավված լինելու զգացում, ինչը պետք է լինի հազվադեպ: Մանկավարժական

աշխատողի և սաների ծնողների համագործակցությունն արդիական է, քանի որ սաների բազմակողմանի դաստիարակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով, որի հիմքում պետք է լինում վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության, հանդուրժողականության սկզբունքները:

Հետազոտական աշխատանքի նպատակը սաների ծնողների համագործակցության աշխատանքի ձևերի բացահայտումն է երեխայակենտրոն ուսուցման պայմաններում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- Ուսումնասիրել հանրակրթական ոլորտում իրականացվող բարեփոխումները,
- Ուսումնասիրել ընտանիքի ունեցած դերը երեխայի ուսումնադաստիարակչական աշխատանքներում,
- Առանձնացնել և ուսումնասիրել մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Գլուխ1 . Ընտանիքի դերն ուսումնադաստիարակչական աշխատանքներում

Գլուխ1.1.Ընտանիք ինստիտուտի դաստիարակչական սոցիալականացնող գործառույթները

Ընտանիքը այնպիսի սոցիալական խումբ է, որտեղ կատարվում են մարդկային կյանքի հիմնական գործընթացները և այնտեղ ձևավորվում է յուրաքանչյուր անհատի առօրյան , որը խոր հետք է թողնում նրա ամբողջ զարգացման վրա: Ըստ կառուցվածքի ընտանիքները լինում են նուկլեստ և ընդարձակ: Ընդարձակ կոչվում է այն ընտանիքը , որը բաղկացած է մեկ կամ մի քանի նուկլեստ ընտանիքներից միասին ապրող մեկ հարկի տակ: Ընդարձակ ընտանիքներում երիտասարդ զույգերը քիչ հնարավորություն ունեն վերահսկելու իրենց կյանքը և յուրաքանչյուր երեխա դաստիարակվում և սոցիալականացվում է մի քանի մեծահասակների կողմից , այլ ոչ միայն 5 ծնողի: Նուկլեստ կոչվում է այն ընտանիքը, որը կազմված է ամուսնական զույգերից և ընտանիքներից : Նուկլեստ ընտանիքը ազգակցական կապեր է պահանջում կնոջ և ամուսնու հարազատների հետ, բայց այն մնում է անկախ, ինքնակարգավորող միավոր: Ընտանիքները լինում են նաև ֆորմալ և ոչ ֆորմալ , նաև՝ լրիվ և ոչ լրիվ: Ընտանիքը կատարում է հասարակական նշանակություն ունեցող գործառույթներ, որոնք բխում են հասարակության պահանջներից: Ընտանիքի, որպես սոցիալական ինստիտուտ գործառույթներն են. վերարտադրող գործառույթ, սեռական հարաբերությունների կարգավորման գործառույթ, սոցիալականացման ֆունկցիա, էմոցիոնալ բավարարվածության գործառույթ, կարգավիճակային գործառույթ, պաշտպանական գործառույթ, տնտեսական գործառույթ: Ընտանիքի, որպես փոքր խմբի կարևորագույն գործառույթներն են ընտանեկան ամբողջության ձևավորման գործառույթ, համատեղ գործունեության իրականացման և կազմակերպման գործառույթ, երեխաների դաստիարակության գործառույթ: Ընտանիքի կյանքում առանձնահատուկ դեր ունի << թերապևտիկ>> կամ հոգեբանական գործառույթը, որի իրականացումը կախված է ամուսնական հարաբերությունների բնույթից: Այս գործառույթի հիմքում ընկած են երկու հոգեբանական մեխանիզմներ՝ էմոցիոնալ լիցքաթափման և դրական լիցքավորման: Այսպիսի ընտանիքը կատարում է իր անդամների պահանջմունքները բավարարող գործառույթներ: Բազմաթիվ ուսումնասիրությունների միջոցով ապացուցվել և հիմնավորվել են /Վիգոտսկի/ երեխայի հետագա զարգացման և վարքային դրսևորման կախվածությունը ծնողական զգայունության մակարդակից: Ոչ զգայուն ծնողները ստեղծում են անհանգիստ բնույթի, անկայուն կապվածություն, որն իր հերթին կարող է լինել երկու տիպի՝ մերժողական և անհետևողական: Այսօր հայտնի են ռիսկային իրավիճակների բնութագրման երեք աստիճաններ, դրանք են `ցածր, միջին, բարձր: Ցածր ռիսկի աստիճանի ընտանիքները, որպես կանոն աղքատ և ծայրահեղ ընտանիքներն են, որոնց գոյատևման մեխանիզմները կայուն բնույթ չունեն, ավելի շատ ապրում են սոցիալական կապերի միջոցով , մասնակիորեն ինքնամեկուսացված են , անհարմար

են զգում իրենց վիճակի համար, սակայն երեխան ընտանիքում շարունակում է մնալ ամենակարևոր արժեքը և ընտանիքի հնարավորություններն ուղղված են դեպի երեխան: Միջին ռիսկի խումբը բնութագրվում է երեխաների և նրանց ընտանիքի գոյատևման համար անհրաժեշտ պայմանների ավելի ակնհայտ և տևական անբավարարությամբ, ցածր ոչ ինքնավստահ ծնողների առկայությամբ, ընտանիքի գոյատևման մեխանիզմների մեջ անչափահաս անդամների ներգրավվածությամբ, որոնք ինքնուրույն որոնում գոյատևելու համար և հաճախ ոչ ընդունելի, երբեմն հակասոցիալական, ծնողները ու երեխաները հեշտությամբ են օտարվում միմյանց: Բարձր ռիսկի խումբը բնութագրվում է որպես սահմանային իրավիճակ երեխայի և ընտանիքի համար: Ընտանիքներում ծնողների հետ աշխատանքն երթադրում է բազմամասնագիտական թիմի հետ համատեղ իրականացվող միջոցառումների մի ամբողջություն, որն ուղղված է ընտանիքի կարգավիճակի փոփոխությանը, միջանձնային կապերի, հարաբերություններ բարելավմանը, ընտանիքում երեխաների արժևորմանը, նրա կարիքների բավարարմանը, կրթության արժևորմանը, կրթադաստիարակչական աշխատանքների իրականացմանը, այլ բազմաթիվ գործառույթների վերականգմանը, իրականացմանը: Եթե ծնողների մոտ ցածր է գնահատվում ծնողավարությունն ու ծնողական զգայունության աստիճանը, ապա նման ծնողները հիմնականում չեն արձագանքում երեխայի մոտ դրսևորվող բացասական դիրքորոշումներին, խնդիրներին, որոնք խանգարում են նրա ադեկվատ սոցիալականացմանը, դաստիարակությանը: Դիտարկելով անձնավորության զարգացման գործոնների փոխներգործությունները անհրաժեշտ է փաստել, որ ժառանգական և բնածին հատկանիշները զարգանում և ձևավորվում են սացիալական միջավայրում, հասարակական ու անհատական հատուկ կազմակերպված ներգործության՝ դաստիարակության միջոցով: Դաստիարակությունը, կազմակերպելով երեխայի կենսագործունեության տարբեր ոլորտները միաժամանակ հնարավորություն է ստանում զարգացնել նրան տարբեր կեղմերով: Ընտանիքը կատարում է դաստիարակչական կարևոր գործառույթ, և այդ գործընթացի կարևոր օրինաչափությունը, գլխավոր օրենքը համարվում է այն, որ եթե երեխան թանկ չէ քեզ համար, դու նրան չես կարող դաստիարակել: Երեխան հարգանք է պահանջում մեծերից, առաջին հերթին իր ծնողներից: Սաների դաստիարակության հարցում ծնողները պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնեն, որ ապահովվի երեխայի հաջող սոցիալական պահանջմունքի բավարարումը և ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք չվնասեն երեխայի առողջությունն ու նրա զարգացման բնական ընթացքը: Ծնողների վարքը, արարքները, նրանց հարաբերությունները, հաղորդակցումն ու կարծիքները, վերաբերմունքը միմյանց ու ուրիշների նկատմամբ երեխայի աչքի առջև են: Ընտանեկան միջավայրը երեխայի համար շատ կարևոր է, այդտեղ է նա զբաղված լուրջ ու դժվարին աշխատանքով, նա այդ տարիքում ունի ծնողների, ընտանիքի աջակցության կարիքը, նա շուտ է հոգնում, նրա աշխատանքային հնարավորությունները դեռևս սահմանափակ են, նկատվում է երեխաների սոցիալ-բարոյական և ճանաչողական փորձի անբավարարությունը: Ծնողները իրենց հարաբերությունները երեխաների հետ կառուցում են այնպես, որ երեխայի համար օրն ու ժամանակն անցնի հետաքրքիր, նրա գործունեությունը լինի ազատ, նրան տրված առաջադրանքները ինչպես դաստիարակի

կողմից, այնպես էլ ծնողների կողմից պետք է լինեն գրավիչ, և հնարավորություն ընձեռնվի երեխայի զարգացման համար: Երեխայի

կենսական կարևոր բոլոր հարաբերությունները վերակառուցվում են և ծնողները պետք է օգնեն երեխաներին , որ ուսումնական գործունեությունը նրանց համար լինի առաջնային, որը հիմք է հանդիսանում երեխայի հոգեկան, մտավոր զարգացման համար: Երեխայի իրավունքները, ծնողների իրավունքները և ծնողական պարտականությունները միմյանցից անկախ չեն կարող լինել: Երեխայի իրավունքների և դրանց առնչությամբ ծնողների իրավունքների միջև գոյություն ունի շատ փխրուն հավասարակշռություն, որի պահպանումը երթադրում է երեխաների իրավունքների վերաբերյալ համաձայնագրի հիմքում ընկած երեք կարևոր սկզբունքների իրագործում. 1.Նախ՝ երեխաները իրավունքների սուբյեկտներ են, և հենց նրանց իրավունքների երաշխավորման և պաշտպանության համար է, որ ծնողներին վերագրում են որոշակի իրավունքներ և պարտականություններ իրենց երեխաների հանդեպ: 2.Երկրորդ՝ երեխայի ունակությունների զարգացմանը զուգահեռ ծնողների իրավունքներն աստիճանաբար պակասում են, և երեխան <<լիազորվում է>> անձամբ իրականացնել իր 8 իրավունքները: 3.Երրորդ՝ երեխայի իրավունքները գոյություն ունեն՝ անկախ երեխայի գտնվելու վայրից. դրանք հավասարապես կիրառվում են տանը, դպրոցում , բոլոր հասարակական կառույցներում, ողջ հասարակության մեջ: Երեխաների իրավունքները սկզբնապես ճանաչվել են << երեխային փրկելու >> նկատառումից ելնելով /երեխաները պետք է պաշտպանված լինեն իրենց ծնողների կողմից գործադրվող բռնություններից/ , սակայն երեխաների կյանքի բոլոր կարևոր բնագավառներում / անվան, բնակության վայրի, կրթության , կրոնի, քաղաքացիության որոշման, բուժման հետ կապված և այլն/ ծնողները շարունակել են լիազորություններ ունենալ: Համաձայնագիրը երեխայի և պետության միջև ուղղակի կապ է ենթադրում , ինչը մարտահրավեր է նետում այն մտայնությանը, թե << երեխաներն իրենց ծնողների սեփականությունն են >> :

Գլուխ1.2.Սաների ծնողների դերը մանկապարտեզում

Մանկավարժական գործընթացում սահմանված է կրթության կազմակերպման սուբյեկտներից մեկի՝ ծնողների, ծնողական խորհրդի գործունեության ուղղություններն ու ձևերը: Սաների ծնողների իրավունքներն ու պարտականություններն են.

1.Սանի ծնողն իրավունք ունի՝

1.Երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը և կրթության ձևը

2.Համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով.

3.Դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով.

4.Պաշտպանելու իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում.

5.Մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին.

6. Մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը.

7.Մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Սանի ծնողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.Սանի ծնողը պարտավոր է՝

1. երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.

2.մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական ոռողջության և հոգեկան վիճակի մասին , ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.

3.հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն,բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն,

գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ.

4.դաստիրակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա

միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ. 5.դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ. Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի սերտ համագործակցությունը նախադպրոցական կրթական հաստատությունների հետ: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.

-նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու,

-նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու:

Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին: Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները: Մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ դիրքորոշումը նպաստում է երեխաների դաստիարակությանը համակցված, փոխպայմանավորված և փոխպատասխանատու գործողությունների միջոցով: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային ակրկնապատկում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը: Նրանք հաճույքով և գերագույն հարգանքով են արձագանքում ծնողների մանկապարտեզի աշխատանքներին ակտիվ մասնկացության փաստը և հպարտանում են ծնողներով: Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը: Մանկապարտեզի դեպի ներս բաց լինելու սկզբունքը ենթադրում է մանկապարտեզի մանկավարժական գործընթացին նպաստող ներխուժող յուրաքանչյուր ներգործության ընկալում, ընդունում և կիրառում:

Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պատրաստ պիտի լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ: Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը տարածքի դպրոցների,

երաժշտական և սպորտային դպրոցների, մանկական ակումբների հետ: Ցանկալի է և չափազանց արդյունավետ մանկապարտեզի փոխադարձ կապը մշակութային հաստատությունների հետ : Կենսական անհրաժեշտություն է և ժամանակի պահանջ մանկապարտեզի համայնքի վարչական միավորների հետ փոխադարձ կապի հաստատումը:

Աճող սերնդի դաստիարակության և կրթության հաջողությունները պայմանավորված են բոլոր սոցիալական ինստիտուտների միջև հաստատվող փոխվստահելի և

փոխպատասխանատու համագործակցությամբ: Համագործակցության կազմակերպման և համակարգման բարդ գործառույթը պատկանում է մանկապարտեզի մանկավարժական անձնակազմին՝ տնօրենի գլխավորությամբ; Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից: Ամենաավանդական ձևը մանկավարժի պարբերական այցելություններն են երեխաների ընտաիքներ: Մանկավարժի հաճախակի այցելությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու երեխաներին տան պայմաններում, ծանոթանալու ընտանիքի բոլոր անդամներին և կենսական պայմաններին: Ավանդական ձևերից են ծնողական ժողովները: Երիտասարդ ծնողների հետ կազմակերպվում են նաև սեմինար-պրակտիկումներ: Բավական արդյունավետ են համատեղ միջոցառումները, որոնք կարող են տարբեր նպատակների ծառայել:: Օրինակ, տիկնիկային ներկայացման համատեղ դիտումն ու քննարկումի ճանաչողական բնույթի է և հիմնականում նպաստում է միացյալ ուժերով ներկայացման բովանդակության վերլուծությանը: Համատեղ տոնակատարություններն ուղղված են երեխայի հուզական և սոցիալական փորձի հարստացմանը: Բանակի տոնին նվիրված հայրիկների հետ համատեղ միջոցառումը նպաստում է հայրիկների ակտիվ մասնակցությանը մանկապարտեզի աշխատանքներին: Ծննդյան տոնակատարություններն ունեն հիմնականում մերձեցման նպատակ:

Նախադպրոցական մանկավարժությունն առաջարկում է նաև համագործակցության ժամանակակից եղանակներ: Այսօր չափազանց կարևորվում է մանկապարտեզում ծնողական անկյան ստեղծումը, որը նախատեսվում է որպես ծնողների՝ մանկավարժի և միմյանց հետ հանդիպման վայր: Ծնողական անկյունը նաև ժամանցի, մեկ գավաթ սուրճ խմելու վայր է, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ազատ և անկաշկանդ մթնոլորտում պարզապես զրուցելու, հարցեր քննարկելու համար: Համագործակցության հետաքրքիր եղանակ է ինտելեկտուալ խաղը, որին մասնակցում են նաև ծնողները: Նրանք կարող են հանդես գալ հուշողների խմբի, ժյուրիի կամ մասնակիցների դերում: Ինտելեկտուալ խաղի տեսակ է ուրախների և հնարամիտների ակումբի կազմակերպումը, որին մասնակից են դառնում ծնողները: Համագործակցության արդյունավետ ձև է ծնողների հետ հաամտեղ կազմակերպվող սպորտային կամ էկոլոգիական միջոցառումները և խաղերը: Վերջին տարիներին առանձնահատուկ կարևորվում է երկարատև նպատակային համագործակցության կազմակերպումը բավական ժամանակ պահանջող

հանձնարարությունների կամ պրոբլեմային իրադրությունների առաջարկման եղանակով: Հանձնարարությունները կարող են լինել երկարաժամկետ համատեղ դիտարկումներ, փորձարկումներ, հետազոտական ուսումնասիրություններ և այլն: Համագործակցության այս ձևը հետաքրքիր է նույն հանձնարարության սահմաններում դերակատարների և գործառույթների փոփոխության հնարավորությամբ: Օրինակ, երեխաներին իրենց ծնողների հետ միասին հանձնարարվում է մարտ ամսվա ընթացքում հետևել ծառերի բողբոջմանը և գրանցել ընթացքը: Բնականաբար, երեխաները հետևում են և նկարագրում, իսկ՝ ծնթղները՝ արձանագրում են: Մի ամիս հետո կարելի է փոխվել դերերով՝ ծնողների նկարագրությամբ երեխաները նկարում են բողբոջած ծառերը և որոշում բողբոջների բացվածության աստիճանը

Գլուխ2. Մանկավարժական աշխատողի համագործակցության և սաների ծնողների հետ համագործակցության ձևերը, կրթական աշխատանքների կազմակերպումը

Սաների ծնողների և մանկավարժական աշխատողների համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների կանոնավոր և արդյունավետ համագործակցության ուղղություններն են.

-Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:

-Ծնողական ժողովներ.քննարկում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:

-Ծնողական համաժողովներ.դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:

-Առավոտյան հանդիպումներ. առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:

-Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

-Գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներն են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:

-Այցելություններ ընտանիք.

-Բաց դռների օրեր.

-Հարվ ու պատասխանի ցերեկույթներ.

-Մանկավարժական հյուրասրահ.

-Գաղափարների տոնավաճառ.

-Վստահության հեռախոս.

-Բարի գործերի օրեր.

-Կլոր սեղան.

-Զրույցներ՝ անհատական և խմբային.

-Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբով և խմբային.

-Անկետավորում.

-Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.

-Փառատոններ և տոնակատարություններ.

-Սպորտային միջոցառումներ.

-Ցերեկույթներ:

/Ցերեկույթ ծնողների մասնկացությամբ/

/Կրթական շքերթ ծնողների մասնակցությամբ/

Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը: դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտենորպես մի շարունակական գործընթաց:

/Ծնողական ժողով/

Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին: տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով:

Հատուկ ուշադրության են արժանի /Խորհուրդ են տալիս ծնողները/ ընդհանուր խորագրով նյութերը /այստեղ հայրիկները և մայրիկները գաղտնիքներ են փոխանակում/: Ներառված են <<Նոր բուժման ձև գրիպից>>, <<Աղցանների բաղադրատոմսեր>>, <<Լավագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ>> և այլ օգտակար խորհուրդներ:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1.հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն,

2.ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված տեսական ուսումնասիրությունների ու էմպերիկ հետազոտությունների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Հանրակրթական ոլորտում իրականացվող բարեփոխումների բոլոր գործընթացներում առաջնային է համարվում երեխայի կրթական կարիքների բավարարումը երեխայակենտրոն ուսուցման պայմաններում, որն իրականացվում է մանկավարժական աշխատողների և սաների ծնողների համագործակցության արդյունքում:

2. Արդյունավետ համագործակցությունն ունի շատ կարևոր առավելություններ, որոնք են. արագ բացահայտվում են սաների ուժեղ և թույլ կողմերը, զարգանում են մանկավարժական աշխատող-սան, մանկավարժական աշխատող-ծնող փոխհարաբերություններ, մեծանում է ուսուցման արդյունավետությունը, մեծանում է մանկապարտեզի սուբյեկտների պատասխանատվությունը միմյանց նկատմամբ և այլն:

3. Մանկավարժական աշխատող-սան, մանկավարժական աշխատող-ծնող համագործակցության սկիզբը դրվում է մանկապարտեզում և ներկայացվում է միմյանց նկատմամբ պահանջներ. Մանկապարտեզը պահանջում է ծնողներից, ծնողները մանկապարտեզից:

4. Մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ երեխայակենտրոն ուսուցման պայմաններում մեծ դերակատարություններ ունեն ինչպես ծնողները, այնպես էլ մանակավարժական աշխատողները, ուստի կարևոր է դառնում միմյանց հետ համագործակցության արդյունավետ միջոցների, ուղիների որոնումը, տարբեր միջոցառումների անցկացումը:

5. Առավել ուշադրություն դարձնել հետևյալ միջոցների գործադրմանը, ինչպիսիք են.

- Մանկավարժական փորձի փոխանակման համաժողովները,
- Ծնողների հետ հարց ու պատասխանի զրույցները,
- Մանկավարժական աշխատողների և սաների ծնողների հանդիպումները,
- Կլոր սեղան քննարկումները, բանավեճերը տարբեր մասնագետների մասնակցությամբ:

6. Ծնողական համակազմի հետ աշխատանքներն առավել արդյունավետ կլինեն, եթե

- Ծնողները պարբերաբար և անմիջականորեն շփվեն մանկավարժական աշխատողների հետ, այլ ոչ թե ծնողական ժողովից ժողով,
- Դաստիարակը մանկապարտեզում առկա բոլոր դժվարությունների մասին տեղեկացնի ծնողներին և նրանք նույնպես մասնակցեն այդ խնդիրների լուծմանը
- Ծնողները երեխայի ունեցած խնդրի կամ խնդիրների մասին տեղյակ պահեն դաստիարակներին,
- Դաստիարակը պարբերաբար հաղորդակցվի ծնողների հետ և այցելի նրանց տուն,

Մանկավարժական աշխատողները պետք է հաղորդի ծնողներին հոգեբանական, մանակավարժական բնույթի խորհուրդներ:

7. Ծնողական համակարգի հետ համագործակցությունը երկարատև և նպատակասլաց աշխատանք է, որը ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>>,Երևան-2008

2.Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան <<Դրական ծնողավարման ձեռնարկ>>, Երևան, <<Սեյվ դը չիլդրեն>>, 2011

3.Հ. Միտոյան, Լ. Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, Երևան,2010

4. Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր /4-5տարեկանների/,Երևան 2011

5.Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր/5-6տարեկանների/, Երևան 2007

6.<<Նախադպրոցական մանկավարժություն>> դասագիրք բուհերի համար, Երևան, 1967

7.Նախաշավիղներ